ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 12-ից 15-ը Ֆրանսիա, Փարիզ գործուղման արդյունքների մասին

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Նորայր Հարությունյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ Գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ֆրանսիա, Փարիզ, 2025թ. նոյեմբերի 12-ից 15-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

IEA Միջազգային էներգետիկ գործակալություն և EU4Energy Էներգետիկ համայնքի քարտուղարություն:

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Տարածաշրջանային աշխատաժողովը նվիրված էր «Արագացնելով վերականգնվող էներգիայի ինտեգրումը. կենտրոնացում ճկունության և ակտիվ սպառողների վրա» թեմային:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Աշխատաժողովի ընթացքում մասնակից երկրների պատվիրակություններին ներկայացվեցին մի շարք պրեզենտացիաներ Եվրոպական տարբեր երկրներում էներգահամակարգում վերականգնվող էներգետիկ աղբյուրների ինտեգրման, էլեկտրաէներգիայի սպառողների և արտադրողների գործունեության ճկունությունն

ապահովող գործիքների և մոտեցումների վերաբերյալ:
Հրավիրված երկրների, ինչպես նաև Հայաստանի պատվիրակության կողմից ներկայացվեց պրեզենտացիա Աշխատաժողովի թեմային համահունչ: Ներկայացվեց վերականգնվող էներգետիկ աղբյուրների ինտեգրման առկա վիճակը, քննարկման ընթացքում գտնվող «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության մասին» ՀՀ օրենքների նախագծերով նախատեսված փոփոխությունների վերաբերյալ նոր դրույթները:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Աշխատաժողովը և բոլոր հանդիպումները կայացել են Միջազգային էներգետիկ գործակալության (IEA) Փարիզի նստավայրում:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ, ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Միջազգային էներգետիկ գործակալության ներկայացուցիչների հետ քննարկել եմ հետագա համագործակցության հնարավորությունների մասին հարցը, էլեկտրաէներգետիկական շուկայի նոր կանոնների և Շուկայի օպերատորի գործառույթների Եվրոպական համապատասխան դիրեկտիվներին համապատասխանեցնելու, վերականգնվող էներգետիկայի էներգահամակարգում և շուկայում ինտեգրելու խնդիրների վերաբերյալ գործնական հանդիպում կազմակրպելու հնարավորությունը դիտարկելու հարցը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԱՄՍԱԹԻՎ